ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՄՈՒԼՈՒՄ» ՇՏԵՄԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Բալասան Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1915թ.-ից անցել է տառապանքի, վերելքների ու վայրէջքների 99 տարի: 99 երկար ու ձիգ տարիներ, որոնք այդպես էլ ի զորու չեղան փոքր-ինչ մեղմելու հայոց վիշտը: Բայց ոչ՛, ոչ թե 99, այլ 119 տարի, որովհետև Սուլթան Համիդ Երկրորդի կառավարությունը կազմակերպել և իրագործել է արևմտահայության զանգվածային բռնություններ, տեղահանություններ, ջարդեր և կոտորածներ 1894-96թթ.-ից: Հետո նրանք մեղսակից դարձան նաև 1915-ի Մեծ Եղեռնին:

21-րդ դարում դժվար է հավատալ, որ որևէ ժողովրդի նկատմամբ երբևէ իրականացված ոճիրը կարող է մնալ չդատապարտված և դեռ քննարկման առարկա դառնալ համայն աշխարհի մարդկության համար:

Դժվար է հավատալ, այո, սակայն փաստ է, որ Թուրքիան մի ամբողջ դար շարունակում է պահպանել իր հանցավոր լռությունը՝ այդպես էլ կամքի ուժ չունենալով գոնե ընդունելու նախնիների կատարած ոճրագործությունը:

Այո՛, համիդյան ջարդերն ու Հայոց Ցեղասպանությունը համաշխարհային պատմության մեծագույն ոճրագործություններից են: Եվ այդ դեպքերն իրենց արձագանքն են գտել ոչ միայն հայկական, այլև օտարերկրյա մամուլի էջերում:

Հավաքածուն, որը ներկայացված է շտեմարանում, կազմել է բնիկ էվերեկցի ծնողների զավակ Արամայիս Վարդուկյանը(ծնվել է Պոլսում, վախճանվել է 1897թ. Նյու Յորքում՝ 23 տարեկան հասակում): Նա Օքսֆորդի համալսարանն ավարտած Բարսեղ Վարդուկյանի որդին է: Արամայիս Վարդուկյանը կազմել է 2 հավաքածու:

Նրա քույրը՝ Հայկանուշը, 1925թ.-ին հավաքածուները պահ է տվել նյույորքաբնակ Հովհաննես և Սաթենիկ Թարխանյան ամուսիններին, ովքեր էլ 1966թ. դրանք հանձնել են Սովետական Հայաստանի կառավարությանը:

Շտեմարանում ներկայացված են հոդվածներ՝տպագրված 1895թ. ամերիկյան հայտնի թերթերից (29 անուն թերթ),որոնք են ՝ Boston Herald, Boston Post, Chicago Evening Post, Chicago Inter Ocean, London, London Daily Chronicle, London Daily News, London Standard, The Daily Telegraph, N. Y. Morn. Journal, New-York Tribune, New York Commercial Advertiser, New York Daily News, New York Evening Post, New York Evening Sun, New York Evening World, New York Express, New York Herald, New York Mail of Express, New York Morning Advertiser, New York Press, New York Recorder, New York Sun, New York Times, New York World, Pall Mall Gazette, The Evening World, The Sun, Westminster Gazette (London).
Շտեմարանում հղումներ են արվում այդ պարբերականների կայքերին: Կայքում տեղադրված է 533 հոդված, որից 72-ը խմբագրական հոդվածներն են (Editorial articles), որոնց աղբյուրը հայտնի չէ: Մնացած 461 հոդվածներից 278-ը ներկայացված է PDF տարբերակով, իսկ 183-ը՝հղումով:Այս հոդվածների մեծ մասը անստորագիր են, իսկ ստորագրված հոդվածների 18 հեղինակներից 6-ը հայեր են՝ Andonian Arsham, Erganian J., Khungian T. B., Kiretchjian Herant Mesrob, Mangasarian M. M., Nazarian K. G..
Այս հավաքածուի թվայնացման աշխատանքներն ավարտված են,իսկ հաջորդ հավաքածուն թվայնացված տարբերակով կներկայացվի 2015-ին: